


ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՍ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ Ա Ռ Ա Ջ Ի Ն Դ Ա Ր Ո Ւ

(Շ ա ր . տ ե ս է Ղ 508)



ԳԼՈՒԽ ԺԶ

ԲԱՆՏՆ



ԲԲ կուտներիա Զիարձակարանի
բանտին մէջ փակուեցաւ և իւր բը-
նակարանին սև պատերուն ակնարկ մը
տեսաւ, իրեն տագնապն աւելի սաստ-
կացաւ: Սակայն իսկոյն տեսակ մը թը-
մրութիւն իւր տանջանաց զգացումը մեղմա-
ցուց: Սիրան և միտքն, ցաւէ և յոգնութենէ
բոլորովին խոնջը, հաւատարապէս հանգստի
պէտք ունէին. ուստի նստաւ, և գլուխը պա-
տին յեցուցած՝ աչքերը գոցեց և քնացաւ:

Գժբաղդ. քունն՝ իւր մանկական օրերուն
մէջ ունեցածին պէս՝ հանգիստ եղաւ, իսկ
երազըն անպատմելի կերպով քաղցր: Նախ
մայրը տեսաւ, յետոյ խարտեաշ մազերով
անծանօթ երիտասարդ մը, որ զինքը այն
անդունդէն կը հանէր՝ ծաղկազուարճ մար-
գագեալին մը տանելու համար, ուր գտաւ
զփաթիլով՝ որ դաշտերուն անուշաբոյր օգր
ծծելով կը զուարճանայր: Շատ չանցաւ՝ դըժ-
բաղդաբար երազէն արթնցաւ, և աչքերը
զարձեալ յիրականութիւն բացուեցան, դաշ-
տերն և ծաղկունք հեռացան, և գաւա ինք-
զինքը բանտին մէջ՝ որ քան զառաջինն ա-
ւելի մութ երևցաւ իրեն: Զգացումն այն-
քան սաստիկ եղաւ՝ որ սրտանմխիկ հեծեծա-
նօք սկսաւ լալ: Մարդ չեկաւ զինքը մխի-
թարելու. բայց բաւական ժամանակ յետոյ

կուտն յանկարծ բացուեցաւ ճանշելով, և
ձեռքը կանթեղ մը բռնած մարդ մը տես-
նելով որ իրեն կը մօտենար, հագիւ ժամա-
նակ ունեցաւ մօրը սառներն իրեն օգնութեան
կանչելու:

Դոմետիաֆոսն էր նա. կեցաւ կուտին
տօգոյն և արտասուալից դէմքը դիտելու, և
ապա տմարդի կերպով քրքիջ մը բարձրաց-
նելով և կանթեղը գետին դնելով,

— Վերջին անգամ մ'ալ, կոռնելիս,
քեզի հետ անուշութեամբ պիտի խօսիմ,
լսաւ. և եթէ դեռ շարունակես դիտ արհա-
մարհել, այն ատեն անողոք դատաւոր մը
պիտի լինիմ քեզի դէմ:

— Որչափ արդար՝ նոյնչափ ալ անողոք...
պատասխանեց կոյսն հեգնութեամբ:

Դոմետիաֆոս այս նախատինքէն չի վեր-
դուլեցաւ, և տեսակ մը հանդարտութեամբ
շարունակեց.

— Եկեր իմ առջևդ դնելու՝ կեանք կամ
մահ, յաղթանակ կամ անպատուութիւն: Քեզ
կը կրկնեմ, որ եթէ յանձն առնուս՝ կ'ար-
ձակեմ Դոմետիաֆոսն և զքեզ անոր տեղը
կայսրուհի կ'ընեմ... Ամենքն ալ զքեզ յան-
ցաւոր կը կարծեն, և դժուար է քու կոտորած
անունդ շտկել, բայց ինչ համար անկարելի
բան չի կայ: Պիտի ըսեմ՝ թէ սխալեր եմ,

և երբ զքեզ կայսրուհի հրատարակեմ, բոլոր Հռովմ ոսիցդ առջև պիտի խոնարհի: Բայց եթէ կուրուքեամբդ իմ առաջարկութիւնս մերժես, ահաւոր մահուամբ պիտի մեռցընեմ զքեզ, և իմ կայսերութեանս յիշատակարանք քու վատ անունդ պիտի անմահացնեն:

— Մահը կ'ընտրեմ աւելի, պատասխանեց կուռնելիս, քան թէ քու նուաստ առաջարկութիւնդ:

Դոմետիանոս ակռաները կրճտեց և ջղային շարժմամբ մը պատմունանը պատռեց. վարժեր էր նա տեսնել միշտ ծառայական հրահանգութիւն մը, և վնասեանին ընդդիմութիւնն զինքը զայրացուց:

— Բայց չեմ գիտեր որ, բնա բիրտ ձայնով մը և սպառնալից ղեմքով մը նայելով անոր, չեմ գիտեթ որ քեզ սպառնացող մահն ահաւոր է, այսինքն՝ ողջ ողջ պիտի թաղուիս:

Կուռնելիս յուսահատական աղաղակ մ'արձակեց: Այս սարսափելի մտածութիւնն զեռիւր մտաց առջև չէր ներկայացած: Մեռնիլ գերեզմանի մը մէջ, մթութեան մէջ մեռնիլ նուաղեալ և սովամահ՝ առանց վերջին անգամ գիտելու երկնից հաստատութիւնը: Ահա այդ ցաւագին մտածութիւն մ'էր, որ կրնար խելքը զլիւն թոցընել:

Կուռնելիս զայն զգաց, և այնպէս պահ մը ցաւագին վարանման մէջ ընկղմեալ մընաց, իւր մարդկային առաքինութիւնն կը տատամներ, և թերևս տեղի պիտի տար՝ երբ իւր երանեալ մօրը յիշատակն իսկոյն մտաց առջև ներկայացաւ. կարծեց թէ զինքը կը տեսնէր փայլուն աստղի մը նման, որ իրեն առաքինութեան ճամբան ցոյց կու տար և կը խոստանար պաշտպանել և օգնել իրեն: Այս տեսլեամբ սիրտն մխիթարուեցաւ և իւր պահ մը տկարացած հօգին նորէն քաշալերեցաւ:

— Կը նախադասեմ մահը, այո՛, մահը, բնա հանդարտօրէն՝ Դոմետիանոսի դառնալով:

Կայսրն բարկութենէն գոյնը նետած գէպի գուռը գնաց, և սեմին վրայ կենալով հարցուց.

— Որոշմ ես:

— Այո՛, կ'ընտրեմ մեռնիլ, և եթէ կ'ուզես վեհանձն գտնուիլ առ իմ, շատ միւռւացներ զայն:

Կայսրն բանտէն ելնելով զայրացած պալատը դարձաւ: Գաւիթը մտնելով տեսաւ գիծեմտիա որ գուռս կ'ենէր. հարցուց նա թէ վնասեան կուսի մը վրայ պատմունան ձեռք էր արդեօք. կայսրն կոպտաբար պատասխանեց և ճամբան շարունակեց:

— Մեզմէ մէկը երկրիս վրայ աւելորդ է, բնա կայսրուհին կատաղի ձայնով և բարկութեան ձև մ'ընելով:

Յետոյ հետաքրքրութենէ մղուած՝ Նումայի պալատը գնաց անմիջապէս տեղեկութիւններ ստանալու համար, առանց կասկածելու թէ յանցաւոր վնասեան կոյսն անպատճառ էր:

Նոյն պահուն քուրմերն՝ իրենց միծին հրամանաց հնազանդելով՝ նորա նախագահութեան ներքև ի խորհուրդ գումարուեցան: Նա վնասեան կուսին վրայ պատմունած օճիւրը իրենց յայտնեց, և ամէնքը միաբերան սրբապիղծ և մահապարտ վճռեցին զինքը: Ո՞վ կրնար կայսեր վկայութեան չի հաւատալ: Պիւնիսի պատմածին համեմատ, Դոմետիանոս եղբէր է ուզողն՝ որ ողջ ողջ թաղուի նա, և իւր զօրեպին կեղծաւորութիւնը ծածկելու համար, հրամայեւ է որ զիցուհին ողբեն՝ Հռովմայ բոլոր մեհնից մէջ քաւութեան գոհեր նուիրելով:

Նոյն օրը Հռովմայ ժողովուրդն սարսափած՝ իմացաւ թէ սուրբ կրակն վնասեան կուսի մը անհոգութեամբ մարեր էր, և դէպ ի մեհնիին գուռը կը վազէր զիցուհոյն բարկութիւնը իջնելու և յանցաւոր անխեղութեամբ: Սակայն այդ զայրացած բազմութեան մէջ կը գտնուէին մի քանի անձինք՝ որ զրբ պարտութեան չէին հաւատար, և կ'ըսէին թէ՝ Դոմետիանոսի հնարքն էր այն՝ անմեղ կին մը ի մահ դատապարտելու համար: Բայց ոչ որ կը համարձակէր նորա կողմը բռնել, որովհետեւ ամէն տեղ լրտեսներ կը վխտային և կը վախէին թէ կայսեր ականջը հասնէր այն բանը:

Պարիս ալ մեհնիին առջևն էր, և իւր տագնապն այնքան ուսաթիկ էր՝ որ չէր գի-

տեր թէ ինչո՞ւ համար հոն եկած էր : Կու-
նելիայի մահուան պատճառ ինքզինքը կը
համարէր , մտածելով թէ իւր ներկայու-
թիւնն սրբազան պարսպին մէջ՝ աւելի ևս
զայրացուցեր էր դժմութիւննոս : Նախ ուզեց
իւր յանցանքը խոտտովանիլ բոլոր հասարա-
կութեան առջև և կուսին անմեղութեանը
վկայ հանդիսանալ . բայց մտածելով որ հին
սուտերամարտի և փախտական պատրիկի մը
ազատագրելոյն խօսքն ընտաւ արժէք պիտի չու-
նենար , միայն փոխեց՝ ոչ թէ մահուան եր-
կիւղէն՝ այլ կուռնելիան ազատելու համար :
Կ'ուզէր նա ամէն ջանք և հնարք գործածել՝
զանիկայ ազատելու համար , և բան մը չէր
որոշած և չէր գիտէր ինչպէս ձեռք զար-
նել . առկայն ապահով էր որ աստուածային
նախախնամութիւնը իրեն օգնութեան պիտի
գար , և թող պիտի չի տար որ փախտուլայի
աղկկան անմեղութիւնը և առաքինութիւնը
այնպիսի օտարափելի մահ մ'ունենային իւր
իրենց վարձք :

Այս մտածմամբ մխիթարուած բազմու-
թեան միջէն կ'անցնէր , խօսակցութիւնները
մտիկ ընելով և հազիւ կարողանալով իւր
կատարութիւնը զսպել՝ ամէն անգամ որ ան-
մեղ կուսին անուրը անիծելը կը լսէր : Ա-
մէն կողմ՝ դառնալէ յետոյ՝ խումբ մը պատ-
րիկներու քով կեցաւ անոնց խօսակցութիւնը
լսելու համար :

— Երկու օրէն կուռնելիա Սարինա
պիտի թաղուի , ըսաւ երիտասարդ ասպետ
մը :

— Գիտեմ , պատասխանեց ուրիշ մը :

Եւ աւելցոց այնպիսի ցած ձայնով մը ,
որ Պարիս հազիւ կրցաւ լսել .

— Կարծես թէ կայսրն վեստեան կուսանքը
մեռցնելով կը զուարճանայ . իրեն կայսերու-
թեան միջոց այս չորրորդն է որ Պղուտոնի
քով կը դրկէ :

— Թո՞ղ այդ տարօրինակ զուարճութիւնն
իրեն մեծ բարիք մ'ընէ , քոչեց ուրիշ մը .
ո՞ր պիտի թաղուի :

— Ո՛ր որ կը թաղեն յանցաւոր կու-
սանքը , ըսաւ ուրիշ մը , ոճրագործաց դաշ-
տին մէջ :

Պարիս չուզեց օրիշ բան լսել , արագաքայլ

հեռացաւ , Աւենտինեան բլուրը անցնելով՝
դէպ ի Տուղդիոլայի տունը կ'երթար , յուսա-
հատաբար կրկնելով . Ոճրագործաց դաշտին մէջ
իսկոյն հասաւ և պարսիղին մէջ տեսնե-
լով ՎՍԵՐԱՍՈՍ , որ փլորոնիայի և բարեպաշտ
պառաւ տիկին՝ Տուղդիոլայի հետ կը խօսէր ,
անոնց մօտեցաւ .

— Ի՞նչ լուր կր բերես , վերջապէս հարցոց
փլորոնիա :

— Դատապարտուած է , պատասխանեց
Պարիս :

— Մահուան , ապաղակեց Սեքստոս զոյ-
նը նեակելով :

— Ո՞ղ ողջ թաղուելու :
Փլորոնիա սկսաւ հեծեծազին արտասուել .
Տուղդիոլա ձեռքերը երկինք բարձրացոց ,
մրմնջելով .

— Ամենակալ Աստուած , զթա՛ փաւ-
տուլայի ցատեր վրայ :

Եւ Սեքստոս կատաղութենէ ոտքը գետին
զարնելով աղաղակեց .

— Սարսափելի ոճիր : Անմեղ կոյս մը
ամբաստանել և ահռելի մահուան դատա-
պարտել...

— Կուռնելիա տոաջին անմեղ զոհն չէ՝
որ Դոմմութիւնոսի ձեռքը դատապարտուեցաւ ,
բաւ Պարիս յշտանար սրտի :

— Հաւիմ այսպիսի ամօթալի գործ մը
պիտի չի տեսնէ : Շքերակոյտին պիտի եր-
թամ , կոյսեր անզթութիւնը պիտի պատմեմ ,
և եթէ սինկիդիոսիոսաց և ռամկաց երակին
մէջ կայ կաթիլ մը վեհանձ արիւն , կուի-
րինեան քաղաքն պիտի ապստամբի իմ բո-
ղոքոյս , գոչեց պատրիկն :

Եւ իւր երիտասարդական խանդով վա-
ռուած դէպ ի պարտիղին զուռը գնաց .

— Կեցի՛ր , ըսաւ Պարիս՝ ուժով բռնե-
լով զնա , զու՛ր տեղ ինքզինքը վստանգի մէջ
պիտի ձգես : Հազիւ թէ այս ապաստանարանէն
զուրօ ելնես , բանտ պիտի մտնես և առանց
կուռնելիան ազատելու պիտի մեռնիս :

— Բայց այսպէս անգործ մնամ , մինչ-
դեռ անունն կ'անպատուեն և ազգականս ի
մահ կը դատապարտեն :

— Դու իրեն համար բան չես կրնար
ընել...

— Ո՛վ ուրեմն պիտի ազատէ զնա :

— Ես, պատասխանեց Պարիս՝ իւր վա-
յելուէ և չքեղ հասակը ցոյց տալով, ես՝ որ
իւր մահուան պատճառն եղայ :

— Ի՞նչպէս, գոչեց Սեբաստոս տագնա-
պիալ :

— Եթէ իմ դիտաւորութիւնն գործադրե-
լու միջոցները գտնեմ, պիտի բռնեմ զայն
քեզ : Առ ժամն զրամի պէտք ունիմ, կըր-
նաս ինձ տալ :

— Եւ ոչ դանկ մ'ունիմ : Իմ հարստու-
թիւնքս գերիններու ձեռքն են, որ իմ դու-
թենէս օգուտ քաղելով՝ պիտի չի հնազան-
դէին ինձ՝ եթէ հրամայէի որ քեզ ոսկի
տան : Չեմ գիտեր որո՞ւն դիմել : Իմ բա-
րեկամներս միայն յաջողութեան օրերուս մէջ
կը մօտենան ինձ . ինչպէս որ փողին հովու
առջև կը ցրուի, այսպէս ալ անոնք կը փախ-
չին ինձմէ դժբաղդութեան օրերուս մէջ : Ես
իմ սեղաններս կը հրաւիրէի զանոնք, որոնք
գալով կը շողորթութէին զիս . բայց արդ ինձ
կոնակ կը դարձնեն և բորոտի մը պէս ինձմէ
կը փախչին :

— Ես ալ նոյնպէս աղքատ եմ, գոչեց
Փլորոնիա հեծեծանօք :

— Ամենքնիս ալ նոյնպէս ենք, աւել-
ցուց Տուղդիւլա : Ես միայն այս ամառանոցը
ունիմ, որուն բերքն հազիւ ծառայիցս սննդ-
դեան կը բաւ : Եթէ ունենայի զհարեղ-
դէններս, ուրախութեամբ կու տայի կուռնե-
լիան ազատելու համար . բայց շատ ժամա-
նակ է որ ես անոնցմէ զրկուեի եմ :

— Աղքատութիւնն շատ անգութ է, եր-
բոր մեզ արգելք մ'է մեր բարեկամաց օգ-
նելու, միմեջաց փլորոնիա :

— Ահ ուրեմն դիտաւորութիւնդ ի գերե-
պիտի ելնէ, որովհետև չունիս այն անարգ
մետաղը, որ տկարը կը զօրացնէ, վատը
կը քաջալերէ, և անարգը կ'ազնուացընէ .
այն կուսքը՝ որուն առջև ամբողջ աշխարհ կը
խոնարհի, և որ ախտը յառաքինութիւն կը
փոխէ, տգեղութիւնը ի գեղեցկութիւն, և
ամէն բան կարող է ընել . գոչեց Սեբաստոս :

— Աստուած ոսկին աւելի կարող է և
մարդկօրէն անկարելի համարուածքն իւր կա-
մաց առջև կ'անհետանան, աշխան հովէն

տարուած անքիւն նման, միմեջաց Տուղդիւ-
լա :

Պարիս լուռ կեցեր էր . աչքը տարտա-
մօրէն առջևը սեեռած՝ խորին կեբպով կը
մտածէր : Սեբաստոս սուսերամարտին մտած-
մունքը չէր գիտեր, բայց յաջողելուն վրայ
կը տարակուսէր, և զինքը լուռ տեսնելով
անվստահութեամբ բսաւ .

— Դրամ պիտի չի գտնես, զուր տեղ
ըղեղզ մի յոգնեցներ :

— Տես, պատրիկ, պատասխանեց սու-
սերամարտն ամենայն պարզութեամբ . զեռ
բազուկներս ուժով են, կուրծքս իւր առու-
գութենէն բան մը չէ կորուսած : Ես քրիս-
տոնեայ եմ, և այսուհետև իմ նմաններս
սպաննելու համար պիտի չի պատերազմիմ,
բայց կուռնելիան ազատելու համար կրնամ
ինքզինքս վաճառել :

Հիացման աղաղակ մը ելաւ Սեբաստի
բերնէն . Պարիսի ձեռքէն բռնելով՝ երկար
ժամանակ սեղմեց զայն և յուզեալ ձայնով
մ'ըսաւ .

— Դու իմ ազատագրեալս ես, բայց ես
քու բարեկամից բլլալու արժանի չեմ :

— Ձիս մի գովեր, պատրիկ, զեռ բան
մ'ըրած չեմ . Սուսերամարտից վաճառողն
չափազանց գնով մը զիս շնորհեց, պիտի
գնէ զիս՝ յուսալով որ դարձեալ կրնայ վա-
ճառել : Իւր հրամանաց ներքև մտնելն ա-
ռաջ երեք օր պիտի խնդրեմ իրմէ, և այդ
երեք օրուան մէջ՝ օգնութեամբ Աստուծոյ որ
անմեղութիւնը կը պաշտպանէ, կուռնելիան
պիտի ազատեմ :

— Բայց կը յուսան որ գնողն ուզէ առա-
ջուց հատուցանել զրամը, ըսաւ Փլորոնիա :

— Ինչո՞ւ միշտ տարակուսիլ և այլչափ
քիչ հաւասար ընծայել : Այդ մարդկային ա-
զատութեան վաճառականին առջև ես այն-
քան արժէք ունիմ՝ որչափ զու չես կարծեր,
և պիտի վերէն թէ մի՞ գուցէ զիս կորսնցընէ՝
իմ խնդիրքս չընդունելով :

— Ես ալ քեզ հետ պիտի գամ, որով-
հետև ես ալ կ'ուզեմ կուռնելիայի ազա-
տութեան համար աշխատիլ, ըսաւ Սեբաստոս
քաջութեամբ :

— Պրետորները շլացնելու համար մար-


դու պէտք չունիմ... քանի մը գերի ինձ
կը բաւեն: Սակայն ժամանակն կը սահի և
անօգուտ խօսքերով զայն կը կորսնցնենմ:
Մնայք բարեաւ. ի դարձիս գիտեմ թէ ինչ
պիտի ընեմ:

Յետոյ Տուղզիոյայի և Փլսրոնիայի գառ-
նայով աւելցուց.

— Խնդրեցէք Աստուծակ որ ինձ առաջ-
նորդէ և օգնէ:

Եւ հեռացաւ նա, թողլով զՍեբաստա և
երկու կանայքը, որք հիացեր էին անոր սրբ-
տին վեհանձնութեան և մեծութեան վրայ,
որով զարձեալ ինչզինքը գերութեան վիճակի
մէջ կը գնէր՝ ուրիշը ազատելու համար:

Շարայարելի




Ա. Զ. Դ.

1. — Որ և իցէ գիրք՝ թէ հեղինակութիւն և թէ թարգմանութիւն, որ խմբագրու-
թեանն նուէր զրկուի, ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆԻ մէջ պիտի ծանուցուի նոր հրատա-
րակութիւնը խորագրով:

2. — Այն հեղինակներն և կամ թարգմանիչք՝ որոնք փոխանակութեամբ իրենց գրոց
կը ցանկան մեր տպած (նոյնագին) գրքերէն ունենալ, պէտք են առաջուց իմացնել մեզ՝
թէ ինչ գիրք է յղելիքը, և ինչ անոր փոխարէն պահանջելիքը:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն



Փառապատ Բիւզանդ կամ Հայկական և կեղեցւոյ սկզբնաւորութիւն.	529
Հայկական վէպ ի պատմութեան Մ. Խորենացւոյ	540
Պատմութիւն Հայկական տպագրութեան	544
Խորհրդածութիւնք Եղիշէի վերայ, նոր քննադատութեան մի առթիւ.	550
ԵԴՄՈՆԴ ԴԵ-ԱՄԻՉԻՍ. — Յուշք Լոն- դրայի	557
Իշխանաց կղզիք	564
Ինչ բան բրաւ հայերենի համար Պիան- զուան	570
ՎԵՍՏԱԼԵ, ԿՈՑՍ. — Պատմական վէպ կեղեցւոյ առաջին դարու	572

SOMMAIRE



Faustus de Byzance ou l'origine de l'église arménienne	529
Le roman arménien dans l'histoire de Moïse de Khorène	540
Histoire de l'imprimerie arménienne	544
Réflexions sur quelques points d'Éli- sée à propos d'une nouvelle é- tude critique	550
EDMOND DE-AMICIS. — Souvenirs de Londres	557
Les Îles des princes	564
Qu'est-ce qu'a fait pour l'arménien le Pianzola	570
LA VESTALE. — Récit historique du premier siècle de l'Eglise	572

